Արձանագրություն N 4

Երևան քաղաքի 10 վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02.06.2020թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /, Կ. Հարությունյան /բացող/, Ռ. Գրիգորյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բանակցությունների մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չի ներկայացրել նոր նվազեցված գնային առաջարկներ և գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով, որ նշված չափաբաժինների մասով բավարար գնահատված մասնակցի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային արժեքը՝ որոշեց ընթացակարգը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո.

-ընթացակարգի 1-ին և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ին և ընթացակարգի 2, 5, 6, 7 և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված ԷԼ-ՍԹՐՈՅ ՍՊԸ-ին կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

2.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան
Անդամներ՝ ---------- Ռ. Գրիգորյան
---------- Ա. Սարգսյան
---------- Կ. Հարությունյան
---------- Ռ. Աբրահամյան
Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան